ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /099/03-08-08/0231/6-86-89/

N 119

06 09 2011թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի 2011թվականի օգոստոսի 30-ի ավագանու թիվ 6 նիստի որոշումները:

Առդիր 5 էջ:

Խորոնք համայնքի ղեկավար Ս. Նահապետյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 8661-11
07 09 2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 1

30/08/2011

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 նիստի օրակարգը համաձայն հավելվածի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՄՈ
4. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

*Որոշման նախագիծը ներկայացրել է*
ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N1 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Ավագանու 2011 թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 նիստի օրակարգի հաստատում.

/զեկուցող Ս.Նահապետյան/

2. Գումար տրամադրելու մասին.

/զեկուցող Ս.Նահապետյան /

3. Սոցիալապես անապահով և նորածին երեխա ունեցող ընտանիքներին օգնություն հատկացնելու մասին:

/զեկուցող Ս.Նահապետյան /

Խորոնք համայնքի ղեկավար Ս.Նահապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 2

30/08/2011

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և համայնքի ղեկավարի առաջարկությամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Խորոնք համայնքի բյուջեի ճանապարհաշինության 04-5-1 նախահաշվի 4251 հոդվածից 600000 (վեց հարյուր հազար) դրամ գումար տրամադրել Ա.Իսահակյան և Սայաթ-Նովա փողոցներից Սևահողեր տանող ճանապարհի ընթացիկ նորոգման նպատակով:

2.Խորոնք համայնքի բյուջեի ջրամատակարարման 06-3-1 նախահաշվի 4251 հոդվածից 600000 (վեց հարյուր հազար) դրամ գումար տրամադրել գերեզմանատան ջրագծի ընթացիկ նորոգման համար խողովակի և անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

3.Խորոնք համայնքի բյուջեի փողոցների լուսավորության 06-4-1 նախահաշվի 4251 հոդվածից 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ գումար տրամադրել մայրուղու երկարությամբ ցերեկային լույսերի վերանորոգման և անհրաժեշտ էլեկտրական նյութերի ձեռք բերման նպատակով:

4. Խորոնք համայնքի բյուջեի ՏԻՄ 01-1-1 նախահաշվի 4239 հոդվածից 200000 (երկու հարյուր հազար) դրամ գումար տրամադրել անկախության օրվա կապակցությամբ միջոցառում և ճաշկերույթ կազմակերպելու նպատակով:

1) Գումարը թույլատրել ստանալու «Կրթություն և Մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Արմեն Վարդանյանին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՎԼԱԴԻԿ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՄՈ

4. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 3

30/08/2011

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱ
ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Խորոնք համայնքի բյուջեի Սոցիալապես անապահով հատվածից 300000 (երեք հարյուր հազար) դրամ գումար հատկացնել սոցիալապես անապահով և նորածին երեխա ունեցող հետևյալ ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՄՈ
4. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N3 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

| | | |
|---|---|---|
| 1. Ղազարյան Սուսաննա Սոխակի | - 40.000 դրամ | սոց. անապ. ընտանիք |
| 2. Մելքոնյան Վիգեն Գուրգենի | - 50.000 դրամ | սոց. անապ. ընտանիք |
| 3. Ներսիսյան Աստղիկ Բախշիկի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| 4. Բաբայան Նուշիկ Ավագի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| 5. Գյոզալյան Քրիստինե Գնելի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| 6. Բեյբության Մարինե Վահագնի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| 7. Սեդրակյան Մարիաննա Դերենիկի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| 8. Խուրշուդյան Մարինե Գագիկի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| 9. Ղազարյան Ալվարդ Ռոբերտի | - 30.000 դրամ | նորածնի ընտանիք |
| Ընդամենը | 300.000 դրամ | |

Խորոնք համայնքի ղեկավար Ս.Նահապետյան